ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍԻ

Գայանե Միխաիլի Հարությունյանի «Սոցիալական շարժումներն արդի հայաստանյան հասարակությունում (սոցիոլոգիական վերլուծություն)» թեմայով, ներկայացված

ԻԲ 00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

1. **Ատենախոսության թեմայի արդիականությունը**
2. **Հետազոտության նպատակը և խնդիրները**

Հետխորհրդային Հայաստանի ժողովրդավարական զարգացումներում պետական վերափոխումներին զուգընթաց առանցքային նշանակություն է տրվում, այսպես կոչված, ներքևից ձևավորվող նախաձեռնություններին, ինչպիսիք են սոցիալական շարժումները: Հետևապես, ժողովրդավարական հիշյալ փոխակերպումների դինամիկան, դրանում դրսևորված հաջողության և ձախողման դրսևորումները դժվար է համակողմանիորեն հասկանալ առանց սոցիալական շարժումների հետխորհրդային փորձի վերլուծության: Նկատենք, որ մինչ այս, թե՛ համալսարանական համայնքների, թե՛ տարբեր հետազոտական կենտրոնների կողմից մշակվել են սոցիալական շարժումների մասնավոր ասպեկտները վերլուծող հետազոտություններ: Այդուհանդերձ, մի կողմից տեսամեթոդաբանական առումով համապարփակ հետազոտությունների սղությունը, և մյուս կոմից հասարակական շարունանական փոխակերպումները, ինչպես նաև սոցիալական շարժումների դինամիկ բնույթն ինքնին, միշտ տեղ է թողնում ընթացիկ վերլուծությունների համար: Այս դիտանկյունից սույն ատենախոսությունը արդիական և ծանրակշիռ ներդրում է այս բացը լրացնելու ուղղությամբ: Այն տեսամեթոդական համալիր հիմքերի վրա իրականացված միջգիտակարգային բնույթի հետազոտություն է, որն իմացաբանական բովանդակ նյութի շրջանակներում նոր լույս է սփռում սոցիալական շարժումների հայաստանյան փորձառությունների վրա:

Սույն աշխատանքի նպատակն է պարզել արդի հայաստանյան հասարակությունում սոցիալական շարժումների դինամիկան, բնութագրիչները, ինչպես նաև դրանց հաջողությունը/ձախողումը պայմանավորող սոցիալ-քաղաքական գործոնները:

Ատենախոսության նպատակից ելնելով՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Դասակարգել և վերլուծել սոցիալական շարժումները մեկնաբանող հիմնական տեսական մոտեցումները

2. Դուրս բերել ուսումնասիրված սոցիալական շարժումների հիմնական բնութագրիչները, կառուցվածքը և գործառույթները

3. Դուրս բերել ուսումնասիրված սոցիալական շարժումների առաջացման պատճառները և դինամիկան

4. Դուրս բերել ուսումնասիրված սոցիալական շարժումների հաջողության/ձախողման նպաստող սոցիալական-քաղաքական պայմանները:

3. Հետազոտությունում ստացված արդյունքները և ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսությունում առկա են նորույթ հանդիսացող մոտեցումներ, գաղափարներ, տեսական ընդհանրացումներ և առաջարկություններ, որոնցից առավել կարևոր են հետևյալները.

Քննադատական վերլուծության են ենթարկվել սոցիալական շարժումները մեկնաբանող հիմնական տեսական մոտեցումները, մշակվել է սոցիալական շարժման այլընտրանքային սահմանում, դուրս է բերվել արդի հայաստանյան հասարակությունում տեղի ունեցած սոցիալական շարժումների ծագումն ու դինամիկան, կազմվել է ՀՀ հետանկախության փուլում տեղի ունեցած սոցիալական շարժումների ժամանակագրությունը, սահմանվել են տեսակները, վերհանվել է սոցիալական շարժումների փոխլրացնող գործառույթը՝ իբրև պետության կողմից չիրականացված կամ թերի իրականացված գործառույթների բացի լրացում, առանձնացվել է և բնութագրվել արդի հայաստանյան հասարակությանը բնորոշ՝ «ֆրագմենտար» սոցիալական շարժման տեսակը, բացահայտվել են և դասակարգվել

արդի հայաստանյան հասարակությունում սոցիալական շարժումների ծավալմանը խոչընդոտող գործոնները, դուրս են բերվել այն նախապայմանները, որոնք անհրաժեշտ են սոցիալական շարժումներին նպատակին հասնելու համար, դուրս են բերվել Հայաստանում սոցիալական բողոքի դրսևորման՝ հակակառավարական ցույցերին միանալու սոցիալական պատճառները, նաև՝ հերքվել է տնտեսական կարգավիճակի դերը՝ որպես սոցիալական բողոքը պայմանավորող փոփոխական:

4. Ատենախոսության արդյունքների գործնական և գիտական նշանակությունը

Ատենախոսության արդյունքները կարող են ծառայել որպես սոցիալական բողոքի հասկացման գործնական ձեռնարկ: Մասնավորապես, դրանք հնարավորություն են տալիս բացատրել, թե ինչու են որոշ խմբեր իրենց խնդիրը հաջողությամբ հանրայնացնում, հասնում դրա լուծմանը, մինչդեռ ոչ պակաս հրատապ այլ խնդիրներ կա՛մ ընդհանրապես չեն դառնում մոբիլիզացիայի առիթ, կա՛մ՝ չեն հաջողում: Սոցիալական բողոքի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալ ոչ միայն բողոքի մասնավոր դեպքերը, այլ ըմբռնել հասարակությունում սոցիալական փոփոխությունների ընդհանուր տրամաբանությունը: Սույն հետազոտությունը հասցեագրված է ոչ միայն գիտական հանրույթին, այլև հանրային կառավարման, և տարբեր ոլորտներում քաղաքականություն մշակողներին իրենց առօրյայում՝ քաղաքականությունների մշակման, հանրային բողոքի կառավարման և սոցիալական կոնֆլիկտների լուծման համար, օգտագործելու համար: Ատենախոսության արդյունքները կարող են գործնական նշանակություն ունենալ նաև քաղաքացիական ակտիվիստների համար, ովքեր նախաձեռնում կամ պլանավորում են հանրային մոբիլիզացիայի երկարատև ակցիաներ: Մասնավորապես, ուսումնասիրության մեջ բացահայտված հաջողության պայմաններն ու խոչընդոտող գործոնները կարող են ուղղորդել ակտիվիստներին ռազմավարական որոշումների կայացման գործընթացում՝ օգնելով նրանց ճիշտ գնահատել քաղաքական հնարավորությունները, արդյունավետ կառուցել ռազմավարությունը և նպատակաուղղված մոբիլիզացնել անհրաժեշտ ռեսուրսները:

5. Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, տասը ենթագլխից, եզրակացություններից և գրականության ցանկից: Ատենախոսության տեքստը շարադրված է 170 էջերի վրա: Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները և ատենախոսության հիմնական վարկածները, ամփոփվել են ատենախոսության մեթոդաբանական հիմքերը, ներկայացվել են հետազոտության գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հիմնավորվել է ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլխում ներկայացվել են սոցիալական շորժումների ուսումնասիրման տեսամեթոդական հիմքերը: Մասնավորապես, քննարկվել են սոցիալական շարժումների միջգիտակարգային հատույթում ձևավորված հիմնական տեսությունները և այս համատեքստում առաջարկված տիպաբանական մոտեցումները: Ներկայացվել են սոցիալական շարժումների կառուցվածքային և գործառական բնորոշիչները, ինչպես նաև սոցիալական շարժումների դինամիկ զարգացման փուլերը:

Ատենախոսության երկրորդ գլխում ներկայացվել է հայաստանյան սոցիալական շարժումների տարեգրությունը, ընտրված դեպքերի շրջանակներում վերլուծվել են հիշյալ շարժումների (ֆեմինիստական, էկոլոգիական և քաղաքային) տիպական դրսևորումները և այս տիրույթում շրջանառվող հիմնական նարատիվները: Նկարագրվել են տեղային սոցիալական շարժումների համար կենտրոնական դեր զբաղեցնող նպատակադրումները, ներքին համերաշխության ռեսուրսը, կազմակերպչական կարողությունները, սոցիալական համատեքստը: Քննարկվել են սոցիալական շարժումների հնարավոր հեռանկարները և դրանք վտանգող մարտահրավերները:

«Եզրակացություն» բաժնում հեղինակը ներկայացրել է ատենախոսության հիմնական արդյունքները, մասնավորապես՝

- Սոցիալական շարժումների փորձը տեղայնացվել է Հայաստանի հետխորհրդային իրադրությունը բնորոշող հայտնի սոցիոլոգիական հայեցակարգերի («Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն», «Կառավարվող քաոս») խորապատկերում:
- Դուրս է բերվել հայաստանյան սոցիալական շարժումների կազմակերպման ֆրագմենտար բնույթը և վերջինիս նշանակալի ազդեցությունը սոցիալական շարժումների հոլովույթում:
- Մշակվել է 4 (չորս)փոփոխականներից (*նպատակադրում, ներքին սոլիդարություն, կազմակերպչական կարողություններ, սոցիալական կոնտեքստ*) բաղկացած վերլուծական մոդել, որի միջոցով հեղինակը վերլուծել է սոցիալական շարժումների 3 (երեք) տիպական ուղղությունները՝ ցույց տալով սոցիալական շարժումների փորձառություններում դիտվող մոբիլիզացիոն հնարավորություններն ու սահմանափակումները:
- Հետազոտված դեպքերի համատեքստային վերլուծության հիման վրա հեղինակը *փոխլրացումն ու փոխարինումը* սահմանել է որպես սոցիալական շարժումների հիմնական գործառույթ՝ պետական մարմիններին պատվիրակված գործառույթների թերակատարման պայմաններում: Այսպիսով, հեղինակն ընդհանրացրել է, որ սոցիալական շարժումները հանդես են գալիս որպես ինստիտուցիոնալ թերությունների փոխլրացման մեխանիզմ այն պարագայում, երբ հասարակությունը լեգիտիմությամբ է օժտում այդ պահանջը:
- Եզրակացվել է, որ գլխավորապես արտաքին կազմակերպությունների, ցանցերի կամ ֆինանսական ռեսուրսների ազդեցությամբ ձևավորված սոցիալական շարժումներն ունեն սահմանափակ հասարակական աջակցություն և ցածր մոբիլիզացիոն ներուժ՝ համեմատած ներքին սոցիալական պահանջներից բխող շարժումների հետ:

- Հեղինակը ցույց է տվել, որ սոցիալական անարդարության ընկալումը կարող է արդյունավետորեն իրացվել միայն համադրական սկզբունքով, երբ շարժումը ենթադրում է հավաքական գործողությունների, իրատեսական նպատակների և շարժման պահանջների շուրջ ձևավորված հանրային լեգիտիմության միասնություն:
- Դուրս են բերվել սոցիալական շարժումների դինամիկայի հնարավոր հեռանկարները :

6. Դիտողություններ և առաջարկություններ ատենախոսության վերաբերյալ

Ներկայացված ատենախոսությունը զերծ չէ թերություններից, որոնցից կցանկանայի նշել հետևյալները.

- Հեղինակը տեսամեթոդական հիմքերում որպես հետազոտության գլխավոր տեսական ուղղություն սահմանում է կոնստրուկտիվ իմացաբանության մոտեցումը, ինչը հետազոտությունն ուղղորդում է մեկնաբանողական սոցիոլոգիայի հունով (*դիցուք՝ ֆենոմենոլոգիական, ստրուկտուրալիստական տեսությունների ներառմամբ*): Ճիշտ է, վերլուծական մասում հեղինակը ներկայացնում է սոցիալական շարժումների համատեքստում շրջանառված մի շարք նարատիվներ, այդուհանդերձ, հետազոտության նախագծային բաղադրիչները (*օբյեկտ, առարկա, նպատակ, խնդիրներ*), ապա նաև տեսական բովանդակությունը (*թերևս, բացառությամբ սիմվոլիկ ինտերակցիոնիզմի*) և հեղինակի առաջարկած սոցիալական շարժումների սահմանումը առավելապես տեղայնացված են կառուցվածքային ֆունկցիոնալիզմի համատեքստում և օգտվում են գլխավորապես վերջինիս կատեգորիալ համակարգից:
- Սոցիալական շարժումների հաջողման և ձախողման դեպքերը վերլուծելիս աշխատանքի 1.4. ենթագլխում մեջբերվում է Չարլզ Թիլլիի սոցիալական շարժումների հայեցակարգը, մասնավորապես՝ քննարկվում է վերջինիս առաջարկած WUNC մոդելը: Հեղինակը արդարացիորեն եզրակացնում է, որ տվյալ մոդելն աչքի է ընկնում սահմանափակ բացատրական նշանակությամբ:

Այդուհանդերձ, նման եզրահանգումը բխում է Թիլլիի հայեցակարգի մասնակի ներկայացումից: Մինչդեռ վերլուծությունը բացատրական առումով կշահեր Թիլլիի հայեցակարգի առավել համապարփակ մշակման դեպքում: Մասնավորապես, եթե քննարկվեր հեղինակի նշանակալի տեսական ներդրումը, այն է՝ սոցիալական շարժումների կոմուլյատիվ բնույթը, որտեղ Թիլլին սոցիալական շարժումները, հայեցակարգելով ժողովրդավարական նպատակների իրացման հոլովույթում, գործընթացը քննում է ոչ միայն արժեքանորմատիվ ներքին տարրերի առկայության կամ բացակայության դիրքից, այլ ժողովրդավարցման գործում մի խումբ բաղադրիչների կուտակային (cumulative) էֆեկտի դիտանկյունից- ներառյալ՝ հավաքական փորձը, բողոքի գործողությունների կազմությունը (repertoire of contention), շարժման ռեսուրսները, կազմակերպչական կապերը, քաղաքական հնարավորությունները:

- Աշխատանքի 1.4 ենթագլխում գաղափարախոսությունը ներկայացվում է որպես նպատակադրման ենթափոփոխական (էջ 57): Այստեղից տպավորություն է ստեղծվում, որ նպատակադրման համեմատ գաղափարախոսությանը տրվում է կախյալ, գործիքային նշանակություն: Մինչդեռ գաղափարախոսությունը ընդունված է համարել գիտելիքի առավել բարձր և արմատական համակարգ, որը ենթադրաբար պայմանավորող դեր է ստանձնում նպատակադրումների համար:
- Հայաստանում ֆեմինիստական շարժումները տիպաբանելիս հեղինակն առանձնացնում է ֆեմինիզմի ծայրահեղ և չափավոր ուղղությունները, այնուհետև նույն համատեքստում օգտագործում է «ռադիկալ ֆեմինիզմ» և «լիբերալ ֆեմինիզմ» ձևակերպումները: Այստեղից տպավորություն է ստեղծվում, որ ֆեմինիզմի լիբերալ ուղղությունը նույնացվում է չափավորական ուղղության հետ, երբ առաջինը գաղափարախոսական իսկ երկրորդն, ավելի շուտ, մարտավարական և էթիկական բեռնվածություն ունի:
- *Խորհրդատվական բնույթի առաջարկներ*

  ա) Սոցիալական շարժումների և համացանցային հաղորդակցությունների փոխադարձ կապը քննարկելիս տեղին կլիներ անդադարձ կատարել նաև

տեղեկատվական ցանցերի գլոբալացման դրսևորումներով պայմանավորված սոցիալական շարժումների վերազգային հայեցակարգերին (TSMs), որոնք նկատելիորեն զարգացվել են վերջին տասնամյակներում:

բ) Հեղինակը ֆեմինիստական գաղափարախոսության նախապատմությունը վերլուծելիս նկարագրությունները սկսում է Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից ի վեր: Այդուհանդերձ, ֆեմինիստական շարժման տարեգրությունն առավել ամբողջական կլիներ, եթե այս բաժնում հիշատակվեր նաև XIX դարի երկրորդ կեսին Կոստանդնապոլսում սկզբնավորված հայազգի գործիչների (*դիցուք՝ Զապել Եսայան, Էլպիս Կեսարացեան*) ֆեմինիստական գործունեությունը՝ արտահայտված հասարակական խմբակներով, շարժումներով և հրատարակչական բեղուն գործունեությամբ: Ճիշտ է, ֆեմինիզմի հիշյալ հոսանքը ծավալվել է այլ տերությունում, այդուհանդերձ, դատելով ֆեմինիզմի հայաստանյան արդի դիսկուրսից, վերջինս պահպանել է իր, առնվազն՝ սիմվոլիկ, արքետիպային ազդեցությունը շարժման տեղային համատեքստի վրա:

- *Պարզաբանողական բնույթի հարցեր երկրորդային վերլուծության վերաբերյալ*

  ա) Հեղինակը երկրորդային վերլուծության բաժնում նշում է 2015թ.-ից նկատվող բողոքի ներուժի անկման մասին՝ մեջբերելով «*հոգնածություն սոցիալական բողոքից*» ձևակերպումը: Իրավիճակ, երբ մարդկանց կենսական պայմանները չեն բարելավվում, բայց հասարակությունը այլևս չունի բողոքելու ցանկություն: Թեև այս նկարագրությունն առաջարկվում է հղման կարգով, այդուհանդերձ հետաքրքիր կլիներ լսել հեղինակի մեկնաբանությունն առ այն, թե այս միտվածքի պայմաններում ինչպես հնարավոր դարձավ 2018թ.-ի «Թավշյա հեղափոխությունը»:

  բ) Նույն բաժնում վկայաբերվում են 2021թ.-ի հարցումները, որոնց արդյունքների համաձայն քաղաքացիների 63%-ը ընդդիմադիր հայացքներ է արտահայտել իշխանության վերաբերյալ: Այս համատեքստում, հետաքրքիր են հեղինակի մեկնաբանումներն առ այն, թե ինչ գործոնների բերումով այս ցուցանիշը չիրացվեց նույն թվականին անցկացված արտահերթ խորհրդարանական ընտրություններում, երբ իշխանական կուսակցությունը

ընտրությունների արդյունքում ստացավ ընտրողների ձայների կեսից ավելին (53.91%-ը)՝ վերստանձնելով պետական կառավարումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները բնավ չեն նվազեցնում ատենախոսության արժանիքներն ու ստացված արդյունքների նշանակալիությունը: Գայանե Միխաիլի Հարությունյանը «Սոցիալական շարժումներն արդի հայաստանյան հասարակությունում (սոցիոլոգիական վերլուծություն)» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն կատարած ավարտուն հետազոտական աշխատանք է, որում լուծված են գիտական կարևոր նշանակություն ունեցող խնդիրներ: Ատենախոսությունում օգտագործված տեսական մոտեցումները և գործնական առաջարկությունները, ինչպես նաև ստացված արդյունքները, գիտականորեն հիմնավորված են և ընդունելի:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսությունը և սեղմագիրը շարադրված են հստակ և ընկալելի ոճով, դրանց ձևավորումը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են ինչպես տեղային, այնպես էլ միջազգային գիտական ամսագրերում հեղինակի հրապարակած 8 (ութ) հոդվածներում: Սեղմագիրը և տպագրված աշխատանքները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Հաշվի առնելով շարադրվածը՝ գտնում եմ, որ Գայանե Միխաիլի Հարությունյանի «Սոցիալական շարժումներն արդի հայաստանյան հասարակությունում (սոցիոլոգիական վերլուծություն)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է ԻԲ 00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ,

սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ սոցիոլոգիայի տեսության
և պատմության ամբիոնի ասիստենտ Գ.Կ.Թումանյան

Պարոն Գ.Կ.Թումանյանի ստորագրության
իսկությունը հաստատում եմ.

ԵՊՀ գիտական քարտուղար
փ.գ.թ., դոցենտ Հերիկ Հ. Հովհաննիսյան

20 _ մայիսի 2026 թ.